

Թափանցիկություն

Ինչ է Արդյունահանող ճյուղերի գործունեության թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԳԹՆ)

ԱՃԳԹՆ-ան հիմքում ընկած է արդյունահանող ընկերությունների կողմից ընդերքի սեփականատեր հանդիսացող պետությանը վճարվող հարկերն ու ռոյալթիները հրապարակելու, իսկ տվյալ կառավարությունների համար՝ ստացվող եկամուտները հրապարակելու պահանջը: Սա ավելի թափանցիկ է դարձնում արդյունահանող ընկերությունների կողմից կատարվող վճարների սանդղակը, ինչպես նաև այդ եկամուտների օգտագործման ուղիները:

Պետական մակարդակով դրա իրականացումը ենթադրում է պետական կառավարում և վերահսկողության իրականացում կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և բիզնեսի ներկայացուցիչներին ներառող բազմակողմ գործընթացի միջոցով: ԱՃԳԹՆ Չափանիշը վերանայվել է 2013 թ-ին՝ ընդլայնելով թափանցիկության ենթակա գործունեության տեսակները և ներառելով օրինակ՝ հետախուզման արտոնագրեր և տարածքային բյուջեներ կատարվող վճարներ: ԱՃԳԹՆ մասնակից ԱՊՀ երկրներից են՝ Կիրգիզիայի Հանրապետությունը, Ղազախստանը, Տաջիքստանն ու Ուկրաինան:

Հայաստանն ու ԱՃԳԹՆ

Հայաստանի կողմից ԱՃԳԹՆ-ի որդեգրման հնարավորությունը դառնում է ավելի հավանական: Հայաստանի կառավարությունը հետաքրքրված է Հայաստանի մասնակցությամբ, նշանակվել է կոորդինատոր երկիրը, ինչպես նաև ստեղծվել է բազմակողմ խումբ, որին մասնակցում է նաև Լիդիան ընկերությունը:



Լիդիանն ու ԱՃԳԹՆ

Լիդիան ընկերությունն ակտիվորեն աջակցում է ԱՃԳԹՆ-ի նպատակներին, որոնք ուղղված են ամբողջ աշխարհում ռեսուրսների շահագործումից ստացվող եկամուտների կառավարման և վերահսկման գործընթացների հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը՝ գործընկերության զարգացման միջոցով:

Լիդիանը հավատացած է, որ այդ նախաձեռնության կիրառումը Հայաստանում կարող է նպաստել արդյունաբերական բնագավառի ավելի լավ ընկալմանն ու կառավարությունների, քաղաքացիական հասարակության և արդյունահանող ընկերությունների միջև վստահության մթնոլորտի ձևավորմանը՝ հաշվի առնելով հանքարդյունաբերության նկատմամբ վերաբերմունքի հաճախակի անիմաստ բևեռացման փաստը: Լիդիանն արդեն իսկ հրապարակում է Հայաստանի կառավարությանը եռամսյակային կտրվածքով իր կողմից արվող վճարումները: Ընկերությունը վերջերս նախաձեռնել է Ամուլսար ծրագրի հավանական սոցիալ-տնտեսական ներդրման վերաբերյալ անկախ ուսումնասիրություն՝ բարձրացնելու համար հասարակության տեղեկացվածությունը Հայաստանյան տնտեսության մեջ հանքարդյունահանման ոլորտի հնարավոր ներդրման վերաբերյալ:

Լիդիանը ձգտում է դառնալ ԱՃԳԹՆ միջազգային մակարդակով աջակցող ընկերություն՝ խթանելով այդ չափանիշի կիրառումը ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Արդյունահանող ճյուղերի գործունեության թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԳԹՆ) իրականացվում է գրեթե հիսուն երկրներում, ինչպես նաև մոտ իննսուն արդյունահանող և նախագագային ընկերություններ միջազգային մակարդակով հայտնել են իրենց աջակցության մասին: